

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն .

### Բովանդակութիւն .

1. Ջոջանց տան կամ Սասմայ ծուեր վէպի ցարդ հրատարակուած տասներեք հին փոփոխակները եւ նորերը ճիւղագրութեամբ :

2. Նոր փոփոխակների կարեւորութիւնը . վէպիս նշանակութիւնը , պատմականը , Մ . Արեղեանի ուսումնասիրութիւնը եւ վէպիս լեզուական ու դրական արժէքը :

3. Ջոջանց վէպի մեր ուսումնասիրութեանց եւ « Ջոջանց վէպի պատմականը » աշխատութեան քննադատութիւնը , № 10-ի Ղումրիկ Թաղաւորն է № 17-ի Կումրին :

4. Մեր երեք փոփոխակների նորութիւնները , № 16-ի « Արեւելից եւ Արեւմտոց » թագաւորն է Հայոց արքան եւ Բիւզանդացոց կայսրը . զլիստման օրէնք . Ջոջանց զիւցաղներն աստղարաշխ եւ սուրբ :

5. № 15 . վկայութիւններ վէպիս նոր շերտաւորութեանց մասին . ձիեր , Բոզ-Գիտաֆին . Գուռկի՛ Չալալին , ոչ քուրդ չալալ ցեղի , այլ Չալալ հայ իշխանի ծիւս սերունդ . Ֆրանկի պապը :

6. № 14-ի կանանց անուններ . Խոսրով թագաւոր , Պարոն Պուօշ Համգան ոչ թէ օտար՝ այլ հայ իշխան Գրիգոր Պահլաւունին է . Պարոն Բուէք Ֆռնտայ՝ խաչակիր . Օհան Ազրակեցին՝ Ադրասեցի :

7. Պարոն Աստղիկ Սասնոյ թագաւոր եւ « չար » Երզնկացի . Աստղիկ զիցոհին արագան անձն , Չմշիկ սուլթանն իզական . Շփոթութեանց հաւանական պատճառները . կարեւոր հանգամանք :

8. Գրական արժէքի նմուշ . Քաջանց տունն Արշակունիք են . Սասմայ ծուերի Ջոջանց տուն կոչելուս պատճառը :

9. Մեր այս երեք՝ № 14 , 15 եւ 16 փոփոխակների խմբագրութեան եւ այլ հանգամանքներ :

§ 1. Արարատի ընթերցողներին անշուշտ յայտնի է , որ Ջոջանց տուն կամ Սասմայ ծուեր մեր ազգային ժողովրդական վէպի մինչև մեր այս վերջին երեք փոփոխակների հրատարակութիւնն Արարատում՝ զանազան ժամանակ սկսեալ 1874—1906 թուականը ըստ են տեսել հետեւեալ ասաներեք փոփոխակները .

1. Սասունցի Դաւիթ կամ Մհերի դուռ . Գարեգին Սրուանձտեանց , Կ . Պոլիս 1874 . Մշոյ բարբառ խոն Բաղեշու : Արատապուած ի Матеріалы для изученія Армянскихъ Нарѣчій , Выпускъ II , Мухскій діалектъ էջ 1—27 . К . П . Паткановъ , Санктъ Петербургъ 1875 :